ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

N 24
18.Մայիսի.2020թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի Մարզպետ
Հ.Մաթևոսյանին

Հարգարժան Պարոն Մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում տեղեկատվություն Արմավիրի մարզի մարզպետարանի կողմից սույն թվականի փետրվար ամսին Ամասիա համայնքի համայնքապետարանում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ:

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-09464-2020
19 05 2020

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ Ս/Թ ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. 2020թ մայիսի 15-ի ավագանու թիվ 7Ա որոշմամբ որոշվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը:
2. Ավագանու 15.05.2020թ թիվ 8 որոշմամբ հաստատվել է Ամասիա համայնքի քաղաքաշինական կանոնակարգը:
3. Ավագանու 15.05.2020թ թիվ 9 որոշմամբ հաստատվել է Ամասիա համայնքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
4. Ավագանու 15.05.2020թ թիվ 10 որոշմամբ հաստատվել է 2019թ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:
5. Համայնքի ղեկավարի 15.05.2020թ թիվ 6 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի գործավարության կարգը:
6. Աշխատակազմի քարտուղարի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի պահանջների համաձայն կազմակերպվում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը և վարվում է համապատասխան գրանցամատյան:
7. Կազմվել և վարվում է քաղաքաշինական մատյան:
8. Համայնքի ղեկավարի 18.02.2020թ թիվ 4 որոշմամբ կասեցվել է 30.01.2020թ ՇԹ-1 գործառույթը:
9. Կազմվել է քաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյան:
10. 2017-2019թթ արձակված անհատական իրավական ակտերի մասով արձանագրված թերությունները նկատի են առնվել և այսուհետ արձակվող բոլոր իրավական ակտերը համապատասխանեցվելու է Տեղական Ինքնակառավարման Մարմինների մասին Հայաստանի Հանրապետության Օրենքին:
11. Ակտում նշված հողի հարկի և գույքահարկի վարձավճարների գանձման գումարները սահմանված կարգով պարտավորվել ենք մուտքագրել համայնքը սպասարկող գանձապետական հաշվին:

Ամասիա համայնքի ղեկավար Գ.Ավդալյան